**Գործ թիվ ԵԴ2/4236/02/26**

**Քաղվածք**

**ՎՃԻՌ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**

03.06.2026թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ Դատարան), հետևյալ կազմով՝

*նախագահությամբ՝ դատավոր* Դ. ՕՀԱՆՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «ԲԻԼԴԵՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01529053, պետական գրանցման համար՝ 273.110.02332, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ, Շիրակի փողոց, շենք 47/3) (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Երևանի քաղաքապետարան ՀՄ-ի (ՀՎՀՀ՝ 02520926, պետական գրանցման համար՝ 286.005, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Արգիշտիի փողոց, շենք 1)՝ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Մ-2 միջպետական ճանապարհ, Հ-8 Նորագավիթի 1-ին փողոց ճանապարհային հանգույցի կառուցման ծրագրի շրջանակներում շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով 2026 թվականի փետրվարի 25 «2» որոշմամբ հայտարարված թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/39» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 2 արձանագրությամբ կայացված «ԲԻԼԴԵՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ, «Էներգոսիսթեմ» ՍՊ և «Նեջտել» ՓԲ ընկերությունների Կոնսորցիումի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին,

**ՎՃՌԵՑ**

1. «ԲԻԼԴԵՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարան ՀՄ-ի՝ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Մ-2 միջպետական ճանապարհ, Հ-8 Նորագավիթի 1-ին փողոց ճանապարհային հանգույցի կառուցման ծրագրի շրջանակներում շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով 2026 թվականի փետրվարի 25 «2» որոշմամբ հայտարարված թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/39» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 2 արձանագրությամբ կայացված «ԲԻԼԴԵՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ, «Էներգոսիսթեմ» ՍՊ և «Նեջտել» ՓԲ ընկերությունների Կոնսորցիումի

հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին, բավարարել՝

*անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Մ-2 միջպետական ճանապարհ, Հ-8 Նորագավիթի 1-ին փողոց ճանապարհային հանգույցի կառուցման ծրագրի շրջանակներում շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով 2026 թվականի փետրվարի 25 «2» որոշմամբ հայտարարված թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/39» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 2 արձանագրությամբ կայացված «ԲԻԼԴԵՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ, «Էներգոսիսթեմ» ՍՊ և «Նեջտել» ՓԲ ընկերությունների Կոնսորցիումի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը:*

2. Երևանի քաղաքապետարանից հօգուտ «ԲԻԼԴԵՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես որպես նախապես վճարած պետական տուրքի գումար:

3. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

4.Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ

Ստորագրող
ԴԱՎԻԹ ՕՀԱՆՅԱՆ
2914920504

2026-06-04 18:43:04 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Դ. ՕՀԱՆՅԱՆ